



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИМЕНИ В. БРЮСОВА  
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ  
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ  
В. БРЮСОВА  
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

---

**ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ**

**LINGUISTICS AND PHILOLOGY**

**1(66)**

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ - 2023**

**ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԻ ՓԱՍՏԱՐԿԻՉ ՆԵՐՈՒԺԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԱԿՐԿՆՈՒԹՅԱՄԲ  
ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ  
ԲԱՆԱԴԱՐՁՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

**ԺԱԿԼԻՆ ՄԻՆԱՍՅԱՆ**

**Համառոտագիր**

Հոդվածի **նպատակն** է հռետորական հնարների փաստարկային-գործաբանական գործառույթը լուսաբանել բառակրկնության վրա հիմնված հնարների օրինակով, որոնք մեծ տարածում ունեն ժամանակակից ֆրանսիական քաղաքական հռետորական խոսույթում, ինչով էլ պայմանավորված է սույն հետազոտության **արդիականությունը**: Առաջադրված խնդիրների լուծումն իրականացվել է տարբեր **մեթոդների** (վերլուծական և համադրական) համալիր կիրառմամբ:

**Հիմնաբառեր՝** *հռետորական հնար, բանադարձում, բառակրկնություն, փաստարկում:*

**Ներածություն**

Ժամանակակից ֆրանսիական քաղաքական տեքստերի և քաղաքական հռետորաբանության խոսողական առանձնահատկությունների ուսումնասիրությունը պահանջում է արտահայտիչ խոսքի ձևավորման գործաբանական միջոցների վերհանում: Խոսքի արտահայտչականությունն ապահովվում է խոսքային-հաղորդակցային ռազմավարությունների իրացման միջոցով, որոնց հիմքում հռետորական հնարների կիրառման մեխանիզմներն են: Այս իմաստով, խոսքային հնարը կամ բանադարձումն ընդգրկուն հասկացություն է, որը ներառում է թե՛ պատկերավորություն ապահովող դարձույթները, թե՛ արտահայտչականությունն ընդգծող շարահյուսական բանադարձումները:

**Թեմայի վերաբերյալ հետազոտությունների վերլուծություն**

Անտիկ ժամանակների պերճախոսական հռետորաբանությունում, որի ուսումնասիրության առարկան քաղաքական կամ դատական

հրապարակային բանավոր խոսքն էր, հնարները դիտարկվում էին իրենց համոզվելու և ներագրու հնարավորությունների տեսանկյունից:

Հոետորաբանության հռոմեական դպրոցի ներկայացուցիչ Քվինտիլիանոսը հնարը սահմանում է որպես մտքի կամ դրա արտահայտման ձևի շեղում սովորական և պարզ ձևից՝ այն համարելով խոսքի զարդարանք (Matveeva, 2003, с. 377-378): Քվինտիլիանոսը բերում է պաշտպանական ճառում բանադարձման օգտագործման օրինակը, ըստ որի՝ այն՝ որպես օժանդակ հնար, ծառայում է խոսքն ավելի արժանահավատ և համոզիչ դարձնելուն, հաճախ՝ նույնիսկ ապացույցների առկայության դեպքում: Այն համեմում է խոսքը, «արթնացնում և աշխուժացնում է» ունկնդրին (Nisard 1865, 316-346):

XIX-րդ դարում հնարը գրեթե նույն կերպ է սահմանում Պ. Ֆոնտանիեն: Ըստ նրա՝ հնարներն ասույթի աչքի զարնող ձևեր են, որոնց շնորհիվ խոսքում մտքերի, զգացմունքների արտահայտումը կատարվում է այլ կերպ, քան ընդունված կամ սովորական է (Larousse, 1971-1976, 11826):

Սակայն ժամանակակից ընկալմամբ՝ նորմայից շեղումը ոչ միշտ է բանադարձման առկայության նշան: Խոսքի շարադրման առանձնահատուկ ձևը պետք է ունենա գործաբանական պատճառաբանվածություն, այլապես այն կհամարվի խոսքային կամ ոճական սխալ: Գործաբանական պատճառաբանվածություն ասելիս՝ նկատի ունենք բանախոսի՝ խոսքի արդյունավետության ապահովման և հաղորդակցական խնդրի կատարման մարտավարական նպատակը:

Պրագմադիալեկտիկական ուղղության հիմնադիրներ Ֆ. Վան Յեմերենը և Բ. Գրուտենդորստը հաղորդակցական խնդիրը կապում են փաստարկման հետ՝ այն սահմանելով որպես լեզվական, հասարակական և ռացիոնալ գործունեության տեսակ, որի նպատակը հասցեատիրոջ մտքում որևէ տեսակետի ընդունելի լինելու համոզվածության ձևավորումն է՝ հաղորդման պնդումը հաստատող կամ ժխտող մի շարք փաստարկների առաջադրման ճանապարհով (Van Frans Eemeren and Grootendorst, 2004):

XX-րդ դարում վերածնված հոետորաբանությունը՝ նեոհոետորաբանությունը կամ այլ կերպ ասած՝ փաստարկման տեսությունը, փորձում է մշակել փաստարկման յուրօրինակ սխեմա, որի շնորհիվ բերված փաստարկների համոզվետությունը պետք է հանգեցնի թեզի ընդունմանը: Փաստարկման բրյուսելյան դպրոցի հիմնադիրներ Է. Պերելմանը և Լ. Օլբրեչ-Տիտեկան, որոնք Արիստոտելի դիալեկտիկական տեսության կողմնակիցներն են, ընդգծում են հոետորական հնարների գեղագիտական և համոզվելու /պերսուազիվ/

նպատակների փոխկապակցվածությունը: Նրանք հոետորական հնարը չեն դիտում որպես մտարտահայտման ձևի շեղում, գտնելով, որ այն մտքի որոշակի տարր է, ապացուցման միջոց: Հետևելով բրյուսելյան դպրոցի դիրքորոշմանը՝ Մ. Անժընոն հնարը համարում է ոչ թե խոսքի փաստարկման շերտը հավելող զարդարանք, այլ դրա համոզվերտությունն ուժգնացնող երևույթ: Ըստ նրա՝ հոետորական հնարների համոզվերտ կամ փաստարկային ուժը դրանց ստեղծած շարահյուսական-իմաստային ռիթմի և մտքի շարժի նրբագեղ զուգորդման մեջ է (Amossy et Koren, 2009):

Կանադացի տեսաբան Ք. Տինդալը, խոսքում հնարների արդյունավետության մասին խոսելիս, շեշտադրում է դրանց երկակի գործառույթը: Դրանք և՛ փաստարկն են ստեղծում, և՛ ընդգծում բերված փաստարկները: Բանադարձման վրա հիմնված փաստարկման արդյունավետությունը նա կապում է հուզականի հետ. բանադարձման կիրառումը լսարանին տանում է դեպի որոշակի զգացմունքային միջավայր, իրագործելով տրված հաղորդակցային խնդիրը, մինչ բանականությունը կսկսի ընտրազատել ստացված տեղեկույթը: Նկարագրված շղթայի լուսաբանման համար նա բերում է անտիմետաբոլի օրինակը, որի դեպքում համոզման նպատակն իրագործվում է լսարանին խոսքի իմաստառիթմային շարժի մասնակիցը դարձնելու շնորհիվ (Fahnestock, 2004, p. 115-135):

Ֆրանսիացի լեզվաբան Մ. Բոնոմը հոետորաբանության և փաստարկման փոխկապակցվածությունը լուսաբանում է հոետորական հնարների գործառական նկարագրի համատեքստում: Ըստ նրա՝ հնարներն իրենց գործառույթով դուրս են գալիս ճոխաբանության շրջանակից՝ դառնալով խոսքի բովանդակության գյուտի (լատիներեն՝ invento) տարրեր: Դրանք խոսքում ի հայտ են գալիս խտացված փաստարկների ձևով: Արիստոտելի առաջ քաշած հոետորական տոպոսի (իրադարձությունների պատկերման համար օգտագործվող պատկերների և մոտիվների մշտական հավաքածու գրական տվյալ համակարգում) և որոշ փաստարկների միջև նմանությունն, ըստ Բոնոմի, վկայում է հնարների և փաստարկման միջև սերտ կապի մասին (Bonhomme 2009):

Վերջին մի քանի տասնամյակում հանրային հաղորդակցական տեսություններում նկատվում է բանադարձումների փաստարկիչ նշանակության նկատմամբ հետաքրքրության աճ: Կարծիք կա, որ հնարներին ներհատուկ է հոետորական բնույթը, և դրանք փաստարկիչ նշանակություն են ստանում որոշակի կառուցվածքային և համատեքստային իրադրություններում, երբ ներգրավվում են փաստարկման գործընթացում: Դրանք նպաստում են հանրային

ընդհանուր համաձայնության (կոնսենսուս) ձևավորմանը, ստեղծում ներդաշնակության և միասնության մթնոլորտ հասցեագրողի և հասցեատիրոջ միջև՝ ցնցելով վերջինիս երևակայությունը և վեր հանելով առկա արժեհամակարգային ընդհանրությունները:

Փաստարկման գործընթացում հռետորական հնարները կատարում են երկակի դեր. մի կողմից հանդես են գալիս որպես փաստարկման համեմատական սխեմայի միջոցով սեփական դիրքորոշումը պաշտպանելու միջոց, և մյուս կողմից՝ հասցեատիրոջ պատկերացումներում մտապատկերներ ստեղծելու ճանապարհով համոզելու միջոց: Ա. Միգունովը կարծում է, որ խոսքում հռետորական հնարները հանդես են գալիս որպես ձևեր, որոնց շնորհիվ երկխոսության մասնակիցների գլխում մտքեր են ծնվում, և ձևավորվում է աշխարհի միասնական պատկերը (Мигунов, 2010, с. 21): Դա նշանակում է, որ այստեղ նույնպես ուշադրությունը սևեռվում է նպատակադրման զուտ հռետորական բնույթի վրա, որի գործառույթն է համոզել, հավաստիացնել, հասնել կոնսենսուսի կամ հաղթահարել դիսսենսուսը: Այս դեպքում փաստարկման խնդրի կատարումը փոխադարձ կապի մեջ է արտահայտչականության և պատկերավորության ապահովման հետ. որքան ավելի հղկված է հռետորական տեխնիկան, այնքան ավելի արդյունավետ է բանադարձված խոսքը: Այսօր արդեն ընդունված է համարել, որ փաստարկման գործառույթը հնարների գործնական ներուժի միայն մի մասն է, որն իրացվում է դրանց հռետորական հիմքի վրա:

Ըստ Մ. Բոնոմի՝ հնարները ներդրվում են բանախոսի կողմից խոսքային հաղորդակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով և իրենց գործնական նախորոշումն իրականացնում հետևյալ փոխկապակցված շղթայով.

1. շարադրանքում առաջ են գալիս ակնառու խոսքային շեղումներ, ինչը հնարավոր է դառնում լեզվի ճկունության շնորհիվ,

2. ավելի խոր՝ հոգելեզվաբանական մակարդակում այսպիսի խոսքային շեղումները ստանում են բանադարձային կարգավիճակ,

3. հնարները նպաստում են շարադրանքի մտապահմանը: Իրենց տեղեկատվական հագեցվածության շնորհիվ դրանք ի գորու են ազդել հաղորդակցման վրա՝ գործի դնելով հետևյալ հինգ գործառույթները.

✓ *Էսթետիկ* գործառույթ, երբ հնարները մասնակցում են խոսքի ոճավորմանը:

✓ *Ֆայրիկ* գործառույթ, երբ հնարներն ուժգնացնում են բանախոս-ունկնդիր կապը: Օրինակ, հռետորական հարցի դեպքում

ստեղծվում է երկխոսության պատրանք, մինչդեռ իրականում արձանագրվում է իրողություն, որը հաստատման կարիք չունի:

✓ *Պաթեմիկ* գործառույթ (հունարեն «pathêma» բառից, որը նշանակում է «տառապանք»): Այս դեպքում խոսքի պատկերավորությունն արտահայտում է բանախոսի կամ նրա ունկնդրի հուզական վիճակը: Ի դեպ, 18-րդ դարի ֆրանսիացի տեսաբան Շ. Բատոյի աշխատություններում հանդիպում ենք «հուզիչ հնարներ» ձևակերպմանը, որոնց թվին են պատկանում բացականչությունը, սաստումը, իսկ Բ. Լամին նկարագրում է այնպիսի հնարներ /հիպերբատ, հակադրություն կամ էլիպս/, որոնք ուղղակիորեն պայմանավորված են խոսողի հոգեվիճակով:

✓ *Ճանաչողական գործառույթ*, երբ հնարները հարստացնում են ունկնդրի գիտելիքները: Նման գործառույթ է վերագրվում և լուսաբանվում փոխաբերության օրինակով՝ հաշվի առնելով այս հնարի արդյունավետությունը նորանոր հասկացություններ նշանակելու և երևույթների միջև բովանդակային կապը ցույց տալու համար:

✓ *Փաստարկող* գործառույթ, երբ հնարները նպաստում են համոզման իրականացմանը, ազդում՝ ունկնդրի որոշում կայացնելու պատրաստակամության վրա (Bonhomme 2009):

Այսպիսով, հռետորական հնարով արտահայտման ձևը նման է բովանդակությանն այն իմաստով, որ ունենալով յուրօրինակ շարահյուսական ուրվագիծ՝ այն արտապատկերում է մարդու «հուզաշարժը»:

Նկատենք, որ խոսքի ազդեցությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն օգտագործված լեզվական միավորների իմաստային կողմով. «հուզաշարժը» շատ դեպքերում ավելի ազդեցիկ է, քան առանց խոսքային զարդարանքի ներկայացվող իրական փաստը: Դա ակնհայտ է դառնում հռետորական տեքստը գործաբանական տեսանկյունից դիտարկելիս՝ վեր հանելով այն ողջ զինանոցը, որը գործի է դրվում, որպեսզի հռետորական խնդրի իրագործման համար անհրաժեշտ փաստարկումը համադրվի գայթակղմամբ համոզելու հետ:

Մեր նպատակն առավել առարկայական դարձնելու համար փորձենք տեքստում հռետորական հնարների փաստարկային-գործաբանական գործառույթը լուսաբանել բառակրկնության վրա հիմնված հնարների օրինակով, որոնք մեծ տարածում ունեն ժամանակակից ֆրանսիական քաղաքական հռետորական խոսույթում: Նշենք, որ հռետորաբանության պատմության ընթացքում այս բանադարձումների դասակարգման, խոսքում դրանց դերի և կշռի, բովանդակային կողմի վերաբերյալ տեսաբանների կարծիքները շատ տարբեր են եղել. դրանց

կիրառությունը բնորոշվել է որպես խոսքում դատարկախոսության, թերարժեք ոճի ցուցիչ, նույնացվել է ավելադրության կամ նույնաբանության հետ և այլն: Բառակրկնության վրա հիմնված հնարների առավել համակարգված դասակարգում և մշակում է կատարել Ֆոնտանիեն 19-րդ դարում, որին հղում են կատարում ժամանակակից տեսաբանները: Դրանք համարվում են զորեղ հնարներ, որոնցով պայմանավորված է խոսքի ազդեցության հզորությունը (Molinié 1994, p. 102-111): Այդ հնարներն այսուհետ ընկալվում են ոչ միայն որպես հասցեատիրոջը հուզականություն հաղորդելու, նրան գայթակղելու կամ համոզելու գործիքներ, այլև որպես տեքստի կառուցման տարրեր, մտքերի շաղկապման և անհրաժեշտ հատվածների ընդգծման հնարներ (Dias, 2012):

Բառակրկնության վրա հիմնված հնարները սույն հոդվածում բաժանել ենք երկու ենթախմբի՝ ոչ կանոնավոր հնարներ, երբ կրկնվող լեզվական միավորները տեքստի մյուս բաղադրիչների նկատմամբ համաչափ չեն, և կանոնավոր հնարներ, երբ տեքստում առկա է համաչափությունը:

Ամենատարածված կրկնությունը լիմաստ բառերի կրկնությունն է: Առավել հաճախ հանդիպում է բազմակի կրկնությունը: Որպես օրինակ վերցնենք Ֆրանսուա Օլանդի ելույթը, որում պարզ բառային կրկնությունը համակցվում է կրկնության մեկ այլ հնարով՝ բազմաշաղկապությամբ: Բառային կրկնությունը ընդգծում է, թե հաղորդման հատկապես որ հատվածի վրա պետք է ունկնդիրն ուղղի ուշադրությունը, իսկ բազմաշաղկապությունը խոսքին հաղորդում է հանդիսավորություն և վեհություն: Թերևս դրա շնորհիվ է խոսքը զուգորդվում Աստվածաշնչյան տեքստի հետ:

Servir, servir la République, servir la France, servir au-delà de nous-mêmes, servir les causes, les valeurs que, dans cette élection, j'ai portées et qui auront à être entendues ici en France, et partout en Europe et dans le monde (Hollande, 2012).

Կարող են կրկնվել նաև բառերի առանձին բաղադրիչներ, օրինակ, ձևայինները: Հետևյալ հատվածում հոմեոտեկտոնը (բառավերջի ձևայինների կրկնություն) բառական հակադրության /անտիթեզի/ մաս է կազմում: Իմաստային հակադրության միջոցով բանախոսը լսարանին ըմբռնելի է դարձնում իր պնդումը, առաջադրում ճիշտ դիրքորոշում: Համակցված հնարների կիրառությունը խոսքին աշխուժություն և համոզական ուժ է հաղորդում, իսկ բաղաձայնի կրկնությամբ իրացվող բաղաձայնայնությունը (ալիտերացիան) նրան օժտում է բարեհունչ հնչյունական կաղապարով:

Nos dirigeants ont choisi la mondialisation dérégulée, ils la voulaient heureuse : elle s'est révélée affreuse (Le Pen, 2011).

Ֆրանսիական քաղաքական հոետորաբանության մեջ հաճախ են հանդիպում ընդարձակ շարահյուսական զուգահեռ կառույցները, որոնք, մեծ մասամբ, ներմուծվում են սկզբնակրկնության /անաֆորի/ միջոցով, երբ իրադրային նկարագրություններում կրկնվում է նախադասության կառուցվածքը.

C'est avec vous que je veux convaincre les Français, c'est avec vous, que je veux remporter cette élection présidentielle, c'est avec vous que je veux présider autrement une France plus juste (Jospin, 2002).

Այս հնարը փոխանցում է խոսողի հաստատականությունը, լսարանին համակում վստահությամբ: Շարահյուսական զուգահեռ կառույցը հաճախ իրացվում է բարդ շարահյուսական մակարդակում՝ պարբերությամբ, որը երկմաս կառույց է՝ բաղկացած պրոտագիսից (առնվազն երկու շարահյուսորեն զուգահեռ կառույցներ, որոնք ուղեկցվում են հնչերանգի աճով) և ապոդոզիսից (պրոտագիսի բոլոր մասերի համար ընդհանուր է և ուղեկցվում է հնչերանգի անկմամբ): Հետևյալ օրինակում հնարը խոսքին հանդիսավորություն, կշիռ, ռիթմ է հաղորդում, իսկ առաջին դեմքի անձնական դերանվան կրկնությունը պարբերության սկզբում և վերջում վկայում է խոսողի՝ սեփական հեղինակությունն ընդգծելու դիտավորության մասին.

Moi, Général de Gaulle, actuellement à Londres, j'invite les officiers et les soldats français /qui se trouvent en territoire britannique ou qui viendraient à s'y trouver, avec leurs armes ou sans leurs armes, (j'invite les ingénieurs et les ouvriers spécialistes des industries d'armement) qui se trouvent en territoire britannique ou qui viendraient à s'y trouver, à se mettre en rapport avec moi (De Gaulle, 1940).

Ինչ վերաբերում է կանոնավոր կրկնության հնարներին, ապա, նախ՝ դրանք կարող են ոչ միայն փոխանցել խոսողի զգացմունքների ուժգնությունը, այլև իրենց շարահյուսական դիրքով ստեղծում են ակնառու լեզվատրամաբանական կապեր՝ լսարանին տրամադրում մտահանգումներ անելուն: Երկրորդ՝ դրանք խոսքը դարձնում են ոչ միայն պարզ, կոկիկ, դյուրըմբռնելի, այլև գեղեցիկ ու մեղեդային: Կան հնարներ, որոնց դեպքում կրկնվում է մեկ տարր. խոսքի հարևան հատվածների սկզբում՝ սկզբնակրկնություն, խոսքի հարևան հատվածների վերջում՝ վերջնակրկնություն (էպիֆոր), դրանց հանգուցակետում՝ գերհավելում կամ օղակ (պրոսապոդոսիս): Հնարներ էլ կան, որոնք հիմնված են երկու տարրերի կրկնության վրա, դրանք են կցուրդը (էպանաֆոր, նախորդ



նախադասության վերջին բառի կրկնությունը հաջորդի սկզբում) և խաչակերպը (խիազմ):

Ֆրանսիական քաղաքական հռետորաբանությունը հեղեղված է սկզբնակրկնություններով: Դրանք գերազանց կերպով արտացոլում են բանախոսի ինքնավստահությունը թե՛ հանդիսավոր ելույթներում, թե՛ բանավեճերում, թե՛ քաղաքական գովազդում.

Cette guerre n'est pas limitée au territoire malheureux de notre pays. Cette guerre n'est pas tranchée par la bataille de France. Cette guerre est une guerre mondiale (De Gaulle, 1940).

... Chacun mesure la menace latente qui, de ce fait, pèse sur la civilisation. Chacun comprend que rien n'est, pour tous les peuples, plus impérieusement nécessaire que d'organiser en commun la recherche, la production, la détention de l'énergie atomique dans des conditions telles qu'elle serve au développement économique et social, mais qu'elle ne puisse jamais être employée pour la guerre (De Gaulle, 1946).

Il n'y a pas d'identité heureuse lorsque les règles de la République sont à ce point bafouées. Il n'y a pas d'identité heureuse lorsqu'on accepte des accommodements «raisonnables» par souci prétendu d'apaisement (Sarkozy, 2016).

2012 թ. նախագահական ընտրությունների ժամանակ Ֆրանսիայի նախագահի թեկնածու Ֆ. Օլանդը լրագրողի այն հարցին, թե ինչպիսի նախագահ է նա ուզում դառնալ, պատասխանեց 3 րոպե 21 վայրկյան տևած խոսքով, որի ընթացքում 15 անգամ միտքը սկսեց «Moi, président de la République» (Ես՝ Հանրապետության նախագահ) անփոփոխ ձևակերպմամբ և «si je suis» (եթե ես լինեմ) հատվածի զեղչմամբ:

Սկզբնակրկնությունը մատնանշում է, թե ինչ դրույթից կամ մեկնակետից է ելնում դատողությունը, մինչդեռ վերջնակրկնությունը ցույց է տալիս, որ նկարագրված իրադրությունն անշեղդրեն հանգեցնում է բանախոսի մատնանշած արդյունքին: Այս հնարն առաջացնում է անխուսափելիության զգացում, այլընտրանքի բացակայության արձանագրում ունկնդրի գլխում:

Que les entrepreneurs investissent plus facilement, mais que chacune et chacun puisse aussi travailler plus facilement (Macron, 2017).

Վերջինիս օգտագործմամբ Մակրոնը լսարանին մղում է անվերապահորեն հետևելու իր թելադրած մտքերի զարգացման հետագծին:

Անադիպլոզը կից հատվածներում բառային կրկնությունն է: Այս հնարը խոսքին հանդարտ, սահուն աճող զգացմունքայնություն է հաղորդում՝ զուգահեռաբար ստեղծելով մտքի և իրադարձությունների

զարգացման պատկեր: Սա խոսքն օժտում է տրամաբանությամբ և հետևողականությամբ: Այս հնարը բնորոշ է Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության 5-րդ նախագահ Ժակ Շիրակի խոսքին.

C'est ainsi que nous inventerons une nouvelle solidarité: une solidarité responsable pour ramener vers l'emploi ceux qui en sont exclus...

C'est une belle ambition. C'est une ambition raisonnable. Et c'est la mienne...

Parce que nous le ferons ensemble. C'est ensemble que nous allons changer l'époque (Chirac 1998).

Նշենք նաև, որ ֆրանսիական քաղաքական քարոզչական տեքստերում շատ են հանդիպում «c'est ainsi que.., c'est nous, qui...» ձևակերպմամբ զուգահիշ կառույցները, որոնք լսարանի և բանախոսի միջև ստեղծում են խորհրդատվական, մտերմիկ և վստահությամբ լի մթնոլորտ՝ դրանով դյուրացնելով հռետորական խնդրի իրագործումը.

C'est nous qui avons conquis les nouveaux droits que la droite presque toujours a combattu historiquement avant de s'y rendre. C'est nous qui avons obtenu les réformes qui ont rendu la société moins dure aux faibles, à ceux qui travaillent et qui gagnent peu (Jospin, 2002).

Գերհավելումը նկարագրում է ոչ միայն խոսողի հոգեվիճակը, այլև օբյեկտիվ աշխարհը, անկախ նրանից, թե այն նյութական է, թե հոգևոր: Դա մտքի փակ շարժ է, որը կուռ տրամաբանություն և կապեր է ստեղծում երևույթների միջև.

Truands raisonnables, profiteurs du crime, criminels organisés, proxénètes, trafiquants, maffiosi, jamais vous ne les trouverez dans ces situations-là. Jamais ! (Badinter, 1981).

Հռետորական սկզբնակրկնության և վերջնակրկնության միաժամանակյա կիրառումը ստեղծում է մեկ այլ բանադարձում, այն է՝ հանգույցը: Այս հնարն իմաստային առումով ասույթին ոչինչ չի ավելացնում, սակայն դրա կիրառումը պահանջում է հռետորական վարպետություն.

On vous a souvent trompés. Je le sais.

On vous a parfois menti. Je le sais.

On vous a même trahis. Je le sais.

Et pourtant vous êtes là ! (Sarkozy, 2007).

On nous dit que la gauche n'a aucune chance, mais rien n'est écrit. [...]

On nous dit que l'extrême droite est qualifiée d'office pour le second tour, mais rien n'est écrit. On nous dit que François Fillon est déjà le prochain président de la République, mais rien n'est écrit (Valls, 2016).

Խաչաձևում (խիազմ) է կոչվում այն հնարը, որում խաչաձև դասավորությամբ կրկնվում են խոսքային տարրերը: Այն կիրառվում է հուզական միջավայրի ստեղծման նպատակով: Կա խաչաձևման երկու տեսակ: Առաջին դեպքում խոսքային տարրերը պարզապես հայելային կերպով կրկնվում են («c'est bonnet blanc et blanc bonnet»), երկրորդում՝ շարահյուսական կապերը փոփոխված են: Իմաստային կապերի փոփոխությամբ ընթացող խաչաձևումը կոչվում է դերափոխական բառակրկնություն (անտիմետաբոլ): Այն օգտագործվում է խոսքի հարուստ բովանդակությունն ընդգծելու համար: Ֆրանսերեն խոսքում հանդիպում է հատկապես այս տեսակը: Բերենք մեկ օրինակ Ֆ. Օլանդի նախընտրական քարոզչական խոսքից.

Le président-candidat est désormais candidat-résident (Mitterrand, 1965).

Այսպիսով, նոր հռետորաբանության ուշադրության կենտրոնում փաստարկում պարունակող խոսքն է: Այն առանձնանում է հատուկ խոսողական և հաղորդակցական նպատակներով, խոսքային ակտերի յուրատեսակ հետևողականությամբ: Ընդ որում, այստեղ փաստարկումը դիտարկվում է որպես հաղորդակցական գործընթաց, որի նպատակը հասցեատիրոջը որևէ մտքի կամ գաղափարի հանգեցնելն է: Այս դեպքում այն ներկայանում է որպես խոսքային գործունեության հատուկ տեսակ, որն ունի բարդ խոսքային ակտի կառուցվածք, գործում է տեքստային մակարդակով և բաղկացած է միևնույն նպատակով միավորված պարզ խոսքային ակտերից: Փաստարկման նպատակը լսարանի վրա ներազդելն է, խնդիրը՝ ասվածի վերաբերյալ ցանկալի դիրքորոշումների ձևավորումը: Փաստարկման խնդրի կատարումը կապված է արտահայտչականության հետ, որն էլ, իր հերթին, իրագործվում է հռետորական հնարների բանեցմամբ:

### ***Եզրակացություն***

Հռետորական հնարների էսթետիկ և համոզչական հատկանիշները փոխկապակցված են այն աստիճան, որ ժամանակակից մի շարք տեսաբաններ «հռետորական հնար» եզրույթը փոխարինում են «փաստարկման հնար» եզրույթով, ընդ որում հնարները դիտարկվում են առավելապես խոսքի բովանդակության տեսանկյունից՝ համարվելով մտքի տարր, ապացուցման միջոց: Դրանք իրենց համոզման գործառույթը կատարում են ունկնդրի գլխում մտապատկերներ առաջացնելու միջոցով, ստեղծում հուզական ներդաշնակության մթնոլորտ բանախոսի և հասցեատիրոջ միջև: Միաժամանակ պետք է նշել, որ բառակրկնությամբ արտահայտված բանադարձումների շարքում

փաստարկման առավել մեծ ներուժ ունեն սկզբնականություններն ու վերջնականությունները, որոնք էլ ամենից հաճախ հանդիպողներն են ֆրանսիական քաղաքական հոետորաբանության մեջ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Amossy R. et Koren R., Rhétorique et argumentation : approches croisées. «Rhétorique et argumentation», N2, 2009.
2. Badinter R., Discours à l'Assemblée nationale contre la peine de mort, 17 septembre 1981.
3. Bonhomme M., De l'argumentativité des figures de rhétorique. «Rhétorique et argumentation», N2, 2009.
4. Chirac J., Discours radiotélévisé de M. Jacques Chirac, président de la République, sur la stabilité internationale, l'avènement de l'euro, les valeurs républicains, la sécurité et la liberté, et la libération des capacités d'innovation notamment grace à la réduction de l'impôt et des charges sociales, Paris le 31 décembre 1998.
5. De Gaulle Ch., L'appel du 18 juin du général de Gaulle, 1940 (<https://www.gouvernement.fr/partage/8708-l-appel-du-18-juin-du-general-de-gaulle>).
6. De Gaulle Ch., Discours prononcé à Bar-le-Duc le 28 juillet 1946 (<https://mjp.univ-perp.fr/textes/degaulle28071946.htm>).
7. Dias D., Les figures de répétition: une tradition rhétorique à l'œuvre dans "Atemschaukel" de Herta Müller. « La clé des langues: cultures et langues étrangères». Université de Nice-Sophia-Antipolis, 2012 (<http://cle.ens-lyon.fr/allemand/les-figures-de-repetition-une-tradition-rhetorique-a-l-oeuvre-dans-atemschaukel-de-herta-muller-172289.kjsp>).
8. Hollande F., Discours de victoire de François Hollande à Tulle, La Croix, le 06/05/2012 (<https://www.la-croix.com/Actualite/France/Discours-de-victoire-de-Francois-Hollande-a-Tulle- NG -2012-05-06-803200>).
9. Fahnestock J., Figures of Argument. University of Maryland. «Informal Logic». Vol. 24, No.2, 2004, pp. 115-135.
10. Frans H. van Eemeren and Rob Grootendorst., A Systematic Theory of Argumentation The pragma-dialectical approach. Cambridge University Press, New York, 2004, p. 1.
11. Jospin L., Déclaration de M. Lionel Jospin, Premier ministre et candidat à l'élection présidentielle, sur les politiques de la gauche, les valeurs socialistes et républicaines, la fonction présidentielle («présider

autrement»), le rôle de la France à l'heure de la mondialisation, l'aide au développement, la justice sociale, la laïcité et le refus du communautarisme, Paris le 7 avril 2002.

12. Jospin L., Déclaration de M. Lionel Jospin, Premier ministre et candidat à l'élection présidentielle, sur la modernisation et le rôle de l'Etat, l'avenir de la jeunesse, la politique familiale, l'éducation et l'emploi, les énergies renouvelables et le développement durable, Grand Quevilly le 9 avril 2002 (<http://www.lioneljospin.net>).
13. La Grande Encyclopédie Larousse. Rhétorique, 1971-1976, p. 11826 (<http://www.larousse.fr/archives/grande-encyclopedie/page/11826>).
14. Le Pen M., Discours de Marine Le Pen, Présidente du Front National, lors du Congrès de Tours des 15 et 16 janvier 2011 (<https://dial.uclouvain.be/memoire/ucl/fr/object/thesis%3A11124/datastream>)
15. Macron E., Déclaration de M. Emmanuel Macron, Président de la République, sur une politique économique en faveur de la création d'entreprise et de l'innovation, à Paris le 15 juin 2017. (<https://www.vie-publique.fr/discours/203019-declaration-de-m-emmanuel-macron-president-de-la-republique-sur-une-p>).
16. Mitterrand F., Candidature de François Mitterrand aux élections présidentielles de 1965.
17. Molinié G., Problématique de la Répétition. «Langue Française. Les figures de rhétorique et leur actualité en linguistique», 1994 N 101, pp. 102-111.
18. Quintilien et Pline le Jeune: oeuvres complètes avec la traduction en français [et] publiées sous la direction de M. Nisard, 1865, pp. 316-346.
19. Sarkozy N., Déclaration de M. Nicolas Sarkozy, ministre de l'intérieur et de l'aménagement du territoire, président de l'UMP et candidat à l'élection présidentielle, sur sa volonté de mettre la fraternité et l'autorité au cœur de son projet politique, Villebon-sur-Yvette le 20 mars 2007.
20. Sarkozy N., Identité heureuse ou malheureuse : la place des musulmans en France au cœur de la primaire de la droite, publié le 25.08.2016. (<https://www.france24.com/fr/20160825-identite-heureuse-malheureuse-juppe-sarkozy-musulmans-france-islam-primaire-droite>).
21. Valls M., Déclaration lors de sa candidature à la primaire de la gauche (5 décembre 2016) de Manuel Valls.

22. Նազարյան Ա. Հ., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-հայերեն-ռուսերեն ուսումնական բառարան, «Ապոլոն», Ե., 1993:  
Nazaryan A. H., Lezvabanakan terminneri franseren-hayeren-r'owseren owsowmnakan bar'aran, «Apolon», E., 1993 (In Armenian):
23. Матвеева Т. В., Учебный словарь: русский язык, культура речи, стилистика, риторика. М., 2003, сс. 377-378.  
Matveeva T. V., Uchebnyj slovar': russkij jazyk, kul'tura rechi, stilistika, ritorika. M., 2003, ss. 377-378 (In Russian).
24. Мигунов А. И., Соотношение риторических и аргументативных аспектов дискурса. РАЦИО. ru. - 2010. - № 4. - С. 21.  
Migunov A.I., Sootnoshenie ritoricheskikh i argumentativnyh aspektov diskursa. RACIO. ru. - 2010. - № 4. - S. 21 (In Russian).

**ЖАКЛИН МИНАСЯН - АНАЛИЗ АРГУМЕНТАТИВНОГО ПОТЕНЦИАЛА РИТОРИЧЕСКИХ ПРИЕМОВ, ВЫРАЖЕННОГО ПОСРЕДСТВОМ ЛЕКСИЧЕСКОГО ПОВТОРА (НА ПРИМЕРЕ СИНТАКСИЧЕСКИХ ФИГУР РЕЧИ)**

*Ключевые слова: риторический прием, фигуры речи, лексический повтор, аргументация*

Цель статьи - проиллюстрировать аргументативно-прагматическую функцию риторических приемов на примере популярных в современной французской политической риторике способов, основанных на повторении. Цель аргументации - воздействовать на аудиторию, задача – сформировать желаемые позиции относительно сказанного. Реализация задачи аргументации связана с выразительностью, которая, в свою очередь, осуществляется за счет использования риторических приемов. Эстетические и убедительные особенности риторических приемов взаимосвязаны до такой степени, что термин «риторический прием» часто заменяют термином «аргументативный прием», более того, приемы рассматриваются как элемент мысли, средство доказательства.

**ZHAKLIN MINASYAN - ANALYSIS OF THE ARGUMENTATIVE POTENTIAL OF RHETORICAL DEVICES ON THE EXAMPLE OF SYNTACTIC FIGURES OF SPEECH**

**Keywords:** *rhetorical device, figure of speech, verbal repetition, argumentation*

The purpose of the article is to illustrate the argumentative-pragmatic function of rhetorical techniques using the examples of repetition which is very popular in modern French political rhetoric.

The purpose of argumentation is to influence the audience. The implementation of the task of argumentation is associated with expressiveness, which, in turn, is realized through the use of rhetorical techniques. The aesthetic and persuasive features of rhetorical devices are interrelated to such an extent that the term “rhetorical device” is often replaced by the term “argumentative device”; moreover, devices are considered as an element of thought.

Ներկայացվել է՝ 25.10.2023 թ.  
Գրախոսվել է՝ 12.11.2023 թ.